ՌԱՀ—ԱՐԱՔՍ—RANHA

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Կորյունը, նկարագրելով Մեսրոպ Մաշտոցի՝ տառերի գյուտից հետո հաղթական վերադարձը և Վաղարշապատ մայրաքաղաքից նրան դիմավորելու գնացածների շքերթը, գրում է. «...քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Ռահ գետոյն»[1]։

Ո՞րն է հիշյալ Ռահ գետը։ Մասնագետները բազմիցս անդրադարձել են այս հարցին, արել տարբեր ենթադրություններ, բայց մինչև օրս չի գտնվել այնպիսի պատասխան, որն ընդունելի լիներ բոլորի համար։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ռահ գետի մասին հայտնված կարծիքներն ունեն շուրջ 100 տարվա պատմություն և բաժանվում են 3 խմբի.

ա) Ռահ գետը որոնվել է Վաղարշապատ քաղաքից հյուսիս ընկած տարածքում՝ կապվելով Ախուրյան գետի կամ նրա որևէ վտակի հետ։

բ) Ռահ գետը որոնվել է Վաղարշապատի մոտակայքում և որևէ գետի հետ չի նույնացվել։

գ) Ռահ գետը որոնվել է Վաղարշապատից հարավ և նույնացվել Երասխ—Արաքսի հետ։

Առաջին խմբի կարծիքներից անդրանիկը Մ. Չամչյանինն է. նա իր «Պատմութիւն Հայոց» երկի առաջին հատորում նկարագրում է Մեսրոպ Մաշտոցի վերադարձը և նրան դիմավորողների շքերթը՝ կապված Ռահ գետի հետ[2], իսկ երրորդ հատորում տալիս է հետևյալ բացատրությունը. «Ռահ գետ, այն է Արփա չայը, ելանէ ի սահմանացն Արագածու և խառնի յԱխուրեան գետ մօտ ի Խոշայ Վանքն»[3]։ Ըստ այսմ էլ Մ. Չամչյանն իր աշխատության վերջին հատորին կցված քարտեզում Ռահ գետը ղետեղել է նշված վայրում։

Այս կարծիքն ընդունել են շատերը։ Այսպես, օրինակ, Ս. Ջալալյանը գրում է. «Աստ սպառին բանք բազմավիշտ ճանապարհորդութեանս հասեայ ցՌահ և յԱխուրեան գետս»[4]։

Ի. Շոպենը, նույնպես հետևելով Մ. Չամչյանին, գրել է. «Արփա-չայը հին Ախուրյանն է... ընդունում է աջ կողմից Կարս-չայը, հին Ռա (Pa) գետը, որ թափվում է նրա մեջ Խոշա-վանքի մոտ»[5]։

Ղ. Ալիշանը, խոսելով Գյումրի-Ալեքսանդրապոլի մասին, նշել է, թե՝ «Սահմանաց վիճակին առ գետակաւն՝ որ թուի հինն Ռահ՝ կայ Ջրարիլու

---

1 Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի, Երևան, 1941. էջ 54։

2 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Ա, Վենետիկ, 1784, էջ 494։

3 Նույն տեղում, Գ, Վենետիկ, 1786, էջ 180 (գրքի վերջում, որն ունի նոր էջակալում)։

4 Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Ա, Տփղիս, 1842, էջ 229, նույն տեղում, Տփղիս, 1853, սկզբի չհամարակալված էջերը։

5 И. Шопен, Историческій памятник состояния Армянской—области, СПб. 1852, с. 374.

գետ, առ որով կամուրջ յԱխուրեան»[6]։ Հետագայում նա արել է նաև հետևյալ դիտողությունը. «...ոչ հաւանիմ զՄեծագետն այն կոչեցեալն մասն Արփա չայի՝ լինել Ռահ գետ, որպէս համարեցան ոմանք»[7]։ Հավանաբար, Ղ. Ալիշանն այս դիտողությամբ կամեցել է մասնակի ճշգրտում մտցնել հարցի մեջ։

Ռահ գետը հյուսիսային կողմերում է որոնում նաև Ս. Երեմյանը։ Այս կապակցությամբ նա գրում է. «Ռահ գետ—Բ5—Արփա լճից հոսող, նախկինում Արփա-չայ կոչվող գետը մինչև Կարս-չայի գետաբերանը»[8]։ Ըստ այսմ էլ նա իր ուսումնասիրությանը կից ներկայացված քարտեզում Ախուրյանի վերին հոսանքը կոչել է Ռահ։ Ս. Երեմյանն այդպես է մոտեցել խնդրին նաև վերջերս (1979 թ.) հրատարակած «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.)» ուսումնական քարտեզը կազմելիս։

Մոտավորապես այսպիսին է Ռահ գետի մասին հայտնված առաջին խմբի կարծիքների ընդհանուր պատկերը։ Ցավոք, մասնագետներից և ոչ ոք չի փորձել փաստարկել իր մոտեցման պատճառները։ Ճիշտ է, Ս. Երեմյանը տվել է որոշ տեղեկություններ, սակայն դրանք, մասամբ միայն գոհացուցիչ լինելով, թերի են ու խճողված։ Այսպես, օրինակ, նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» աշխատության հատուկ անունների ցանկում «Ռահ գետ»-ի տակ հղված են հետևյալ տեղերը. «Բ5, 78, 101»[9]։ Ծանոթանանք դրանց։

«Բ5» նշումը վերաբերում է այդ աշխատությանը կից ներկայացված քարտեզին, որտեղ, իրո՞ք, Բ5 ցանցավանդակում Ախուրյան գետի վերին հոսանքը համարված է Ռահ գետը։ «78» նշումը վերաբերում է աշխատության 78-րդ էջի բացատրությանը, որից միայն մի հատված բերվեց վերը։ Ահա այն ամբողջությամբ. «Ռահ գետ—Բ5—Արփա լճից հոսող, նախկինում Արփա-չայ կոչվող գետը մինչև Կարս-չայի գետաբերանը։ Այժմ գետի այս մասը սխալմամբ կոչվում է Ախուրյան, այնինչ Ախուրյան է կոչվել Կարս-չայը և նրա շարունակությունը կազմող՝ նախկինում Արփա-չայ կոչվող և այժմ Կարս-չայի գետախառնուրդից սկսած Ախուրյան կոչվող գետը։ Ռահ գետի անունը առնչվում է հին հուն. Pă անվան, որը տրվում էր Վոլգա գետին և ցույց է տալիս այդ անվան սկյութական ծագումը»[10]։ Վերջին՝ «101» նշումի ցույց տված տեղը «Աշխարհացույցի» բնագիրն է, որտեղ խոսվում է ոչ թե Հայաստանի Ռահ գետի մասին, ինչպես պետք էր սպասել, այլ՝ Ասիական Սարմատիայի Ռա (Pă) գետի, որը կից ներկայացված քարտեզում չի էլ նշված[11]։ Աշխատության հատուկ անունների ցանկում ցուցում կա նաև վերո-

6 Ղ. Ալիշան, Քննական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853, էջ 64 (դրքի վերջում, որն ունի նոր էջակալում)։

7 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1890, էջ 5։

8 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 78։

9 Նույն տեղում, էջ 144։

10 Նույն տեղում, էջ 78։

11 Նույն տեղում, էջ 101։ Ահա «Աշխարհացույցի» համապատասխան հատվածը. «Եւ ունի [Ասիա Սարմատացւոց] ազգաբաւառ քառասուն և վեց։ Եւ ի հիւսիսոյ՝ առ Անծանօթ երկրաւ, բնակեն Թագաւորական Սարմատք եւ [Սարմատք] Զիակերք։ Իսկ առ մտիւքն Տանայիս գետոյ՝ բնակին Նախճամատեանք, եւ ազգ մի այլ, որ են Կղարչք. եւ ապա Սիւռակացիք, ապա Միթռիդատենէ գաւառ, եւ ապա յարեւելից կուսէ Շանթային լերանցն բնակեալ են Ամազունք, որք են կանայք պատերազմողք, մինչև ցգետն որ կոչի Ռա, որ երկակի բղխէ ի հիւսիսոյ Անծանօթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Զիական լերանցն, արձակէ վտակ մի ի Տանայիս գետոյ որ ի Միովիտ ծովակ իջանէ...» և այլն։

հիշյալ Ռա գետի մասին. «Pă-78, տ. Ռահ գետ»[12]։ Սա ինքնին ցույց է տալիս, որ այդ գետերը նույնացված են և տեղեկությունները վերաբերում են ոչ թե Ռահ, այլ՝ Ռա (Pă) գետին։ Ինչ վերաբերում է քարտեզին, ապա այստեղ էլ հակառակն է կատարված։ Ցույց է տրված Ռահ գետը, իսկ Ռա (Pă)-ն ներկայացված չէ։ Իրականում անհրաժեշտ էր Ռահ գետի կապակցությամբ նշել ոչ թե «Աշխարհացույց»-ի 101-րդ էջը, այլ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը կամ գեթ առաջին խմբի կարծիքներից որևէ մեկը, օրինակ, Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոցի» Գ հատորը։

Այսպես, ուրեմն, ո՛չ Մ. Չամչյանի, ո՛չ նրա հետևորդների և ո՛չ էլ Ս. Երեմյանի աշխատություններում հիմք չկա առաջին խմբի քննվող կարծիքների համար։

Երկրորդ խմբի կարծիքների հեղինակներից հիշենք երկուսին։ Առաջինը Ղ. Ինճիճյանն է, որը չի համաձայնել Մ. Չամչյանի հետ և Ռահ գետը որոնել է Վաղարշապատի մոտակայքում. «Առ քաղաքաւս անցանէր Քասախ գետակ, նաև Ռահ գետակ ինչ ի մոտակայքս նորին ընթանայր, որպէս ցուցանէ Կորիւն»[13]։ Ղ. Ինճիճյանը Ռահը համարել է Արաքսի վտակներից մեկը. «տե՛ս ստորև և զՌահ վտակ Երասխայ»[14]։ Խնդրին այդպես է մոտեցել և Հ. Հյուբշմանը։ Թվարկելով Արաքսի մեջ թափվող ձախակողմյան գետերը, նա գրել է. «1. Ախուրյան... 2. Քասաղ... 3. Ռահ Վաղարշապատու քով, զոր միայն Կորյուն կհիշե... 4. Մեծամոր...»[15]։

Կարծիքների այս խումբը ճիշտ է այնքանով, որ Ռահ գետը որոնում է Վաղարշապատի շրջակայքում։ Սակայն սխալ է, որ Ղ. Ինճիճյանը և Հ. Հյուբշմանը ակնարկում են մի ուրիշ (երբեմնի) գետի գոյություն, որը և, իբր թե, եղել է Ռահը։ Ուստի, այս կարծիքները ևս չեն կարող համարվել ընդունելի։

Երրորդ խմբի կարծիքների հեղինակներն են Գ. Ֆնտգլյանը, Մ. Աբեղյանը և նրանց հետևողները։ Ըստ նրանց, Ռահը՝ Երասխ—Արաքս գետն է։ Այսպես, Գ. Ֆնտգլյանը հարց է տալիս. «Ո՞ր գետն է Ռահ անսովոր անունով, որուն ուրիշ տեղ չենք հանդիպիր...» և ինքն էլ պատասխանում է. «...ամենայն հավանականությամբ Երասխ կամ Արաքս»։ Այս ենթադրությունը հիմնավորելու նպատակով նա հիշել է Արտաշատից ոչ հեռու Տափերական կամրջի մոտ տեղի ունեցած մի ուրիշ հանդիսություն[16]։

Նման կարծիքի է եղել նաև Մ. Աբեղյանը. «Ռահ գետ—թերևս աղճատված ձևն է «Երասխ» կամ «Քասախ» անուններից... բայց հավանորեն դա «Երասխ» անվան աղճատումն է»[17]։ Նա ևս դիմում է Տափերական կամուրջի հետ կապված վերոհիշյալ փաստի օգնությանը։

Մեր որոնումները հիմք են տալիս պնդելու, որ ճիշտ են Գ. Ֆնտգլյանը և Մ. Աբեղյանը։ Նրանք աշխատել են փոքր-ինչ հիմնավորել իրենց մոտե-

---

12 Նույն տեղում, էջ 144։

13 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 472։

14 Նույն տեղում, էջ 111։

15 Հ. Հյուբշման, Հայոց հին տեղւոյ անունները, Վենետիկ, 1907, էջ 259։

16 Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Գ. Ֆնտգլյանի, Երուսաղեմ, 1939, էջ 22։

17 Կորյուն, Վարք Մաշտոցի, 1941, էջ 111, տե՛ս նաև 1979 թ. վերահրատարակության 66—67-րդ էջերը։

ցումը։ Ուշագրավ է, օրինակ, Տափերական կամուրջի հետ կապված պատմական իրողության փաստը, երբ երկրի հարավային կողմերից եկած մի ուրիշ անվանի դործչի դիմավորել են այդտեղ՝ Արաքսի ափին։ Այս կարծիքն առավել հավանական կդառնար, եթե նկատի առնվեր, որ Արաքսի վրա եղել է նաև Մեծամորի կամուրջ։ Այդ է վկայում V դ. պատմիչ Ագաթանդեղոսը, գրելով. «Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամորի կոչէն»[18]։

Հարցի լուծման համար օգտակար են այն փաստերը, որոնք ցույց են տալիս, թե Հայաստանում և նրանից դուրս կան համանուն այլ գետեր ու վայրեր և, որ դրանց նույն անունները երևան են գալիս տարբեր ձևերով։ Նախ՝ Հայաստանի մասին։ Թովմա Արծրունու վկայությամբ Հայաստանի գետերից մեկը կոչվել է Արասխ. «Եւ ես մի՛ իշխեցից քան զԱրասխ անցանել յայդ կոյս»[19]։ Ի. Մարկվարտը գտնում է, որ այդ արասխը ոչ թե Երասխ—Արաքսն է, այլ ուրիշ գետ[20]։ Ս. Երեմյանը գրում է. «Արասխ գետ... թափվում է Կապուտան (Ուրմիա) լիճը...

Արասխ գետը Մեծ Հայքի սահմանն էր Գանձակ Շահաստան քաղաքի... կողմից... Որոշ անտիկ հեղինակներ այս Արասխ—Արաքսը շփոթում են Երասխ—Արաքսի հետ»[21]։ Նա ըստ այդմ ուղղում է մտցրել ոչ միայն քարտեզի վրա[22], այլև «Աշխարհացույց»-ի բնագրի մեջ՝ Արասխ վերանվանելով նաև նշված գետից հյուսիս ընկած գավառը[23]։

Ղ. Ինճիճյանը նշում է, որ Երասխ—Արաքսը կոչվել է նաև Ռաս, Ռոշ, Ռոս անվանաձևերով[24]։

Ի. Շոպենը գրում է. «Արաքս—հայերեն՝ Երասխ, վրացերեն՝ Ռասխի, արաբերեն և թուրքերեն՝ Ա՝ Ռաշ, Ռազ»[25]։

Վրացական սկզբնաղբյուրներում Երասխ—Արաքսի անունը հանդիպում է ոչ միայն Ռասխի, այլև Ռախսի[26], ինչպես նաև ՀՐԵՁՈ (Արեզի)[27] ձևերով։ Երասխ—Արաքսի անունը՝ առանց սկզբի Ե կամ Ա տառերի, միանգամայն բնականոն երևույթ է։ Այդ մասին դեռևս Հ. Հյուբշմանն է նշել. «Հայ լեզվի ձայնական օրինաց համեմատ Երասխը հնագույն Ռասխ ձևէ մըն է»[28]։

Այսպիսով, ստացվում է նույն գետի անվան տարբեր ձևերի հետևյալ շղթան. Արաքս, Արասխ, Ռասխ (ի), Ռաս, Ռոշ, Ռոս- Ա՝ Ռազ, Ռազ և այլն։

---

18 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 28։

19 «Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», ս. Պետերբուրգ, 1887, էջ 86։

20 Ի. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 212)։

21 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 38—39։

22 Նույն տեղում, տե՛ս քարտեզը, Դ 6։

23 Նույն տեղում։

24 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 109—111։

25 И. Шопен, նշվ. աշխ., էջ 366։

26 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, Երևան, 1934, էջ 168, նույն տեղում, Բ, Երևան, 1936, էջ 12, 14, 21—24, 36, 43, 54, 56, 59, 60, նույն տեղում, Գ, Երևան, 1955, էջ 42, 46, 48, 50, 52, 54, 80, 85, 204։

27 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 74։

28 Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 340։

Այստեղից արդեն նշմարվում է նաև արդեն Ռահ՝ ձևը տեսնելու հնարավորությունը[29], որին կանդրադառնանք ստորև։

Հարցի լուծմանն օգնում է հատկապես Վոլգա գետի վաղ ժամանակների Ռա անունը։ Այդ Ռա և Հայաստանի Ռահ գետերի անունների նմանությունն ու նույնությունը վաղուց է նկատված։ Այսպես, օրինակ. Ղ. Ինճիճյանը, հավանաբար, «Աշխարհացույց»-ի ձեռագրերում հանդիպելով նաև Ռահ ձևին, գրել է. «Ռահ անցանէր մօտ ի Վաղարշապատ, զոր չէ պարտ շփոթել ընդ միւս մեծի Ռահ գետոյն որ է ի Սկիւթիա, կամ յԱնիական Սարմատիա»[30]։ Ինչպես տեսանք, Ի. Շոպենն էլ Հայաստանի Ռահ գետի անունը նշել է Ռա («Ра») ձևով, իսկ Ս. Երեմյանը դրանք ոչ միայն նույնացրել է, այլև թույլ տվել որոշ շփոթություն։ Ուշագրավ է, որ Ռա գետի անվան հետազոտողները ցույց են տվել, թե Վոլգա—Ռա գետը ևս հնում կոչվել է Արաքս։ Այսպես, օրինակ, Հերոդոտի հիշած Արաքս անունով հայտնի և երբեմն միմյանց հետ շփոթվող տարբեր գետերի կապակցությամբ Ի. Դյակոնովը գրում է. «Հերոդոտի մոտ «Արաքսը» վերաբերում է Վոլգային, Սիր-Դարիային և Արաքսին»[31]։ Ըստ որում, այստեղ նշված վերջին գետը Հայաստանի Արաքսն է։ Ուստի, կարող ենք ասել, որ հնում Արաքս են անվանվել և՛ Վոլգան, և՛ Արաքսը։ Քանի որ Վոլգան կոչվել է նաև Ռա, նշանակում է Ռա-ն համազոր է Արաքս անվանը։ Եվ քանի որ Ռա-ն ու Ռահը նույնն են, հետևաբար ստանում ենք հետևյալ մեծարժեք հավասարությունը. Ռա=Ռահ=Արաքս։

Հարց է առաջանում, արդյոք դա պատահականություն է, թե՞ լեզվապատմական իրողություն։ Շեշտենք, որ մասնագիտական գրականության մեջ այս հարցի պատասխանն արդեն տրված է, և այն խոսում է հօգուտ լեզվապատմական իրողության։ Այսպես, Ի. Դյակոնովը, Հերոդոտի հիշատակած Վոլգայի Ռա անունը համադրելի է համարում Ավեստայի մեջ հիշված Raṇhā գետի անվան հետ։ «Բանասիրորեն,— գրում է նա,— հնարավոր է նույնիսկ Ավեստական (Ավեստայի) Raṇha-ն համադրել Վոլգայի (հուն. Rhā ստացած՝ սկյութական «Raha-ից) հետ»[32]։ Հետագայում այս կարծիքն ավելի է ճշգրտվել։ Այդ է վկայում բարձրագույն ուսումնական հաստատությունների համար վերջերս հրատարակված քրեստոմատիան. «Ավեստական Ռանխա, համաիրանական Ռախա, հետագայում Ռա (խ) և այլ ձևերը համապատասխանում են Պտղոմեոսի վկայած Վոլգայի անվանը («Ра»)[33]։ Ըստ երևույթին, վերոհիշյալ մասնագետներին ծանոթ չի եղել Կորյունի տեղեկությունը՝ Հայաստանի Արաքս գետի Ռահ անվան մասին, այլապես նրանք կվկայակոչեին նաև այդ փաստը։ Նկատենք, որ այս հարցի վրա ուշադրություն է դարձրել Գ. Ֆնտգլյանը՝ իր

---

29 Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 319—320։ Այստեղ «Արաքս» անվան բացատրության վերաբերյալ արված են որոշ ենթադրություններ, որոնք կարոտ են վերանայման։

30 Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Ա, Վենետիկ, 1835, էջ 157—158։

31 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, с. 380.

32 Նույն տեղում, էջ 380։

33 «Хрестоматия по истории Древнего Востока», ч. II, М., 1980, с. 73. Այստեղ հիշված Ռախա ձևը թերևս հնարավորություն է տալիս մտածելու նաև Բիհիսթունի արձանագրությունից հայտնի Խալդիտայի որդի հայ Առախայի անունը բացատրելու մասին։

վերոհիշյալ կարծիքն ամրապնդելիս, որին, սակայն, հետագայում հայ լեզվաբաններից ոչ ոք չի անդրադարձել։ Ահա նրա տողերը. «Կորյունի տված Ռահ ձևը կհիշեցնե Ավեստական Rangha կամ Ranha...»[34]։ Միանգամայն ճիշտ կոահում, որը, ինչպես տեսանք, արդեն հիմնավորել և լուծել են սովետական արևելագետները։

Այսպիսով, մեզ հետաքրքրող հարցի («ո՞րն է Ռահ գետը») պատասխանը գտնված է. Ռահ-ը Արաքսն է։ Մասնագիտական գրականության մեջ Ավեստայի հետազոտողները հաճախ են Ռանդխա—Ռանխա գետը նույնացրել Հայաստանի Արաքսի հետ և Էրանվեզ (Արիան վեջ) կոչված դրախտային երկիրը փնտրել նաև Հայաստանի Արաքսի ափերին կամ նրա ակունքների մոտ։ Հասկանալի է, որ այստեղ հարկ է անդրադառնալ նաև այդ հարցին։ Բայց քանի որ Հայաստանի Արաքսն էլ երբեմն շփոթվել է և կարող է նորից շփոթվել նույնանուն այլ գետերի հետ, ուստի նախ՝ մի քանի խոսք այդ մասին։

Վերն ասվեց, որ Հերոդոտը հիշատակում է Արաքս անունով մի քանի գետեր[35], որոնց թիվը, ըստ Ի. Դյակոնովի և ուրիշների, հասնում է 3-ի։ Դրանցից մեկը գտնվում է Ռուսաստանում, մյուսը՝ Միջին Ասիայում, երրորդը՝ Հայաստանում։ Ստրաբոնը նույնպես նշում է Արաքս անունով երեք գետ, որոնցից մեկը Հայաստանի Արաքսն է[36], մյուսը՝ Հունաստանի Պենեյ գետը[37], իսկ երրորդը՝ կամ Միջին Ասիայի Արաքսը, կամ Վոլգան[38]։ Ըստ նույն հեղինակի, Արաքս է կոչվել նաև Հունաստանի հրվանդաններից մեկը[39]։ Հին հունական մի ուրիշ հեղինակ՝ Մետրոդորոս Սկեպսացին, Արաքս անունով է հիշել Փոքր Ասիայի Թերմոդոն գետը[40]։

Գ. Ջահուկյանի մոտ հանդիպում ենք այսպիսի դիտողության. «Արաքս (Arasaxe-կայան Կեսարիայից արևելք, այժմ Ջերեզեկ գյուղ), Թերևս Արասխ, Երասխ (գետ)»[41]։ Ս. Երեմյանն այդ նույն կայանը հիշում է Արասաքս ձևով և տեղադրում Փոքր Հայքում[42]։

Նույնանուն գետերի ու վայրերի այս ցանցը, ինչպես տեսնում ենք, ձգված է Հունաստանից մինչև Միջին Ասիա, իսկ դրանց անունն ունի նույն իմաստը, ինչ Հայաստանի Ռահ, Ռուսաստանի Վոլգա—Ռա և Ավեստայի Rangha—Ranha գետերի անունները։ Ո՞րն է դրանցից նախնականը։ Քանի որ դրանց հետ կապված տեղեկությունները հասնում են մի կողմից Ավեստային, իսկ մյուս կողմից՝ Հերոդոտի միջնորդությամբ աքքադա-ասորեստան-

---

34 Կորյուն, Վարք Մաշթոցի, 1930, էջ 22։

35 Геродот, История в девяти книгах, Л., 1972, с. 75, 77, 78, 190 (տե՛ս նաև էջ 148, 519) և այլն։

36 Страбон, География, 1964, էջ 79, 485, 497, 498, 500 և այլն։ Արաքսը սխալմամբ ծանոթագրված է, որպես Պարսկաստանի գետ (էջ 846)։

37 Նույն տեղում, էջ 500։ Պենեյը սխալմամբ ծանոթագրված է որպես Հայաստանի գետ (էջ 907)։

38 Նույն տեղում, էջ 500։ Հեղինակը սխալմամբ նույնացրել է Հայաստանի Արաքսի հետ։ Իրականում խոսքը Հերոդոտի հիշած այն գետի մասին է, որը սկյութներին բաժանել է բակտրիացիներից։

39 Նույն տեղում, էջ 317, 318, 320, 326, 369, 435։

40 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 16, տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1, էջ 109։

41 Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական լեզուները, Երևան, 1970, էջ 116։

42 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 39 (քարտեզում՝ Դ 1)։

յան սկզբնաղբյուրներին[43], թերևս պիտի ընդունել, որ այդ բոլորի արմատները ձգվում են դեպի հնդեվրոպական ցեղերի ընդհանուր նախընտանիքի ոլորտները։ Եվ քանի որ այժմ գնալով ամրապնդվում է այդ նախընտանիքի առաջավորասիական ծագումը, իսկ նրա «նախալեզվի տարածման հնարավոր սկզբնական տարածքը» (ըստ Տ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի) տեղադրվում է Վանա լճի ամբողջ շրջակայքում[44], այն է՝ Պատմական Հայաստանի կենտրոնական մասերից մեկում, ուստի մնում է այդ կողմերում էլ որոնել Ռահ—Արաքս կամ Rangha—Ranha գետի ծագումը։ Ինչպես հայտնի է, հենց այս՝ Վանա լճից հյուսիս-արևմուտք ընկած կողմերից է սկիզբ առնում և հզորանալով դեպի արևելք շարժվում Երասխ—Արաքս—Ռահը։ Վանա լճի հյուսիս-արևմտյան կողմում է գտնվում նաև Ռահ անունով սարահարթը[45]։ Դրանք համահնչուն են Ավեստայի այն տողերին, որոնք ասված են Ահուրա Մազդայի անունից և վերաբերում են արիական կոչված 16 երկրներից վերջինին. «Տասնվեցերորդ, ամենալավ երկրներից և ապրելու տեղերից մեկը ես՝ Ահուրա Մազդաս, ստեղծեցի Ռանխա գետի ակունքների մոտ»[46]։ Ավեստայի հետազոտողները հաճախ են խնդրին մոտեցել նաև այս տեսանկյունից, չնայած հնդեվրոպական ցեղերի նախահայրենիքի հարցը դտնվել է հեղհեղուկ վիճակում։

Սովետական ականավոր գիտնական Ե. Բերտելսը գրում է. «Որտե՞ղ է վերջապես ծնվել զրադաշտականությունը... նրա ծագումը պատկանում է այնպիսի հեռավոր հնության, ուր մեր հայացքն առայժմ չի թափանցում։ Կան հատվածական վկայություններ մազդեիզմի պաշտամունքի առկայության մասին Հայաստանում և Միգիայում»[47]։ Սովետական մի ուրիշ գիտնական՝ Ա. Մակովելսկին, գրում է, թե Ավեստայի դրախտային «էրանվեզ» երկիրը նախապես համարվում էր դիցաբանական... հետո միայն այն սկսեց նույնացվել Արաքս գետի ջրավազանի հետ... Զրադաշտական կրոնի օրրանը հանանչվեց Արաքսի ափերը (խոսքը Հայաստանի Արաքսի մասին է—Ա. Մ.)»[48]։

Սովետական մի այլ գիտնականի՝ Ի. Բրագինսկու ուսումնասիրության մեջ, ուր զետեղված են նաև Ավեստայի մի քանի «Յաշտ»-երի թարգմանությունները, ասված է. «Այրանա վեշ (Airyana vāeǰa—արիական տարածք) դիցաբանական երկիրը՝ արիական ցեղերի ծննդավայրը (прородина) տարբեր գիտնականների կարծիքով կամ Խորեզմն է, կամ Արաքսի ափին գտնվող որևէ տեղ, կամ Ամու և Սիր-Դարիաների (հին հունական Օքս և Յակսարտ անուններով) ջրավազանների որևէ գավառ»[49]։ Ուշագրավ է, որ անդամ ամենաերևակայական մեկնաբանության մեջ, որի հեղինակը փորձել է միմյանց միացնել բոլոր Արաքսները՝ ձգված ոչ միայն ցամաքների, այլև ծովերի վրայով, Հայաստանն ունի կենտրոնական տեղ։ Խոսքը Գ. Ֆնտգլյանի հիշած Ուելսի հետևյալ տողերի մասին է, որոնք վերաբերում են «Ավեստական

43 Геродот, նշվ. աշխ., էջ 148։

44 «Знание-сила», 1980, № 2, էջ 24—25 (տե՛ս քարտեզը և նրա բացատրության առաջին կետը)։

45 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 30։

46 «Хрестоматия по истории Древнего Востока», ч. II, с. 72.

47 Е. Бертельс, История персидско-таджикской литературы, М., 1960, с. 35.

48 А. Маковельский, Авеста, Баку, 1960, с. 63.

49 И. Брагинский, Из истории персидской и таджикской литератур, М., 1972, с. 50.

Rangha-ի կես առասպելական դետին, որ ծանոթ աշխարհի մեծ մասը կը շրջապատեր և որ Ամու Տարյայե (Oxsus) սկսելով՝ Կասպիականեն կանցնի և Երասխն ի վեր ընթանալով կմտնե Սև ծով. Միջերկրական, անկե Նեղոս ու Հնդկական ծով»[50]։ Այս գետի՝ Կասպից ծովից Արաքս գետի հոսնով ի վեր մինչև Սև ծով ընկած տարածքը, գրեթե ամբողջ Հայաստանի տարածքն է, որովհետև Արաքսից հետո դեպի Սև ծով պիտի նկատի առնվեին վերևում նշված Ջերեկեկ գյուղի մոտ գտնվող Արաքսը, ապա՝ Թերմոդոն—Արաքսը, որը թափվում է Սև ծովը։

Այս իրողությունները մեր առջև բարձրացնում են հայ ժողովրդի պատմության վաղ ժամանակներին վերաբերող մի հույժ կարևոր հարց՝ զրադաշտականությունը և հին Հայաստանը։ Մասնագետները վաղուց են անդրադարձել դրան և ընդգծել համապատասխան առնչությունների երբեմնի գոյությունը։ Հնդիրանական ցեղերի հիշյալ կրոնը, իր դիցաբանական արմատներով, ունի ընդհանուր հնդեվրոպական ծագում, որն այդ ցեղերի տրոհումից հետո յուրաքանչյուրի մոտ զարգացել է յուրովի։ Հայ իրականության մեջ, օրինակ, Ահուրա Մազդայի երկվորյակը եղել է Արամազդը, նրա դստեր—Անահիտա Արդվիսուրայինը՝ Անահիտը, Միհրինը՝ Մհերը և այլն[51]։

Տեղին է հիշել նաև, որ Ավեստայում, Արաքսից բացի, հիշվում է նաև Հրազդան գետի անունը։ Անկախ նրանից, թե մասնագետները մինչև այժմ ինչպես են մոտեցել խնդրին, հարկ ենք համարում հիշել է. Գրանտովսկու հետևյալ ձևակերպումը. «Հրազդան գետ (հայկ. Razdan<Hrazdan<իրան. Frazdān(u) հմմտ. ավեստ. Frazdānu»[52]։ Մեր ձեռքի տակ կան բավական հարուստ փաստեր, որոնց բոլորին սակայն այստեղ անդրադառնալու հնարավորություն չունենալով, առայժմ բավարարվենք այսքանով և անենք որոշ եզրակացություններ.

ա) Կորյունի հիշած Ռահ գետը՝ Երասխ—Արաքսն է։ Հետևաբար, սխալ է Ռահ գետը որոնել Վաղարշապատից դեպի հյուսիս ընկած կողմերում և կապել Ախուրյանի հետ։

բ) Ճիշտ չէ, երբ Ռահ և Արաքս գետերը տարբերելով միմյանցից, երկուսի ծագումն էլ համարվում է սկյութական և կապվում միանգամայն տարբեր հասկացությունների հետ։

գ) Մեսրոպ Մաշտոցին դիմավորել են ոչ թե Ախուրյանի կամ նրա որևէ հյուսիսային վտակի ափին, այլ՝ Արաքս գետի, Վաղարշապատ—Մեծամորի կամրջի մոտ։

դ) Ռահ—Արաքս, Ռահ—Վոլգա, ինչպես նաև Արաքս անունով հայտնի ուրիշ գետերի ու վայրերի անուններ կապվում են Ավեստայի Ռանգխա—Ռանխա (Rangha—Ranha) գետի անվան հետ և հիմք տալիս խորանալու հայ ժողովրդի հնդեվրոպական ծագման վաղ ժամանակների պատմության մեջ։

---

50 Կորյուն, Վարք Մաշթոցի, 1930, էջ 22։

51 «Զրադաշտականությունը և հին Հայաստանը» խորագրով մեր զեկուցումը՝ կարդացված ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի 1979 թ. սեպտեմբերի 18—22-ի գիտական նստաշրջանում, այժմ տպագրության ընթացքի մեջ է։ Տե՛ս նաև մեր «Մաշտոց անվան ստուգաբանությունը» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1979, № 8, էջ 81—93)։

52 Э. Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, с. 292.

PAh—АРАКС—RANHA

АСАТУР МНАЦАКАНЯН

Резюме

Описывая возвращение Месропа Маштоца после создания им армянских письмён, Корюн (V в.) отмечает, что торжественная процессия, вышедшая из Вагаршапата, встречала его на берегу реки Ра («Ռահ»). До сих пор локализация этой реки неизвестна. На наш взгляд, среди высказанных по этому поводу мнений правильным является мнение, согласно которому река Pah отождествляется с Араксом—Ерасхом. Правильна также догадка Г. Фынтыгляна относительно связи между рекой Pah и рекой Rangha—Ranha, упоминаемой в Авесте. В этой связи заслуживают внимания свидетельства, относящиеся к многочисленным рекам и местностям, известным под названием Аракс, и в особености комментарии к названиям Волги, которая прежде называлась и Ра и Аракс и отождествлялась с названием реки Rangha—Raha из Авесты. Следовательно, Rah—это есть название реки Аракс.

Таким образом, торжественная процессия, вышедшая навстречу Месропу Маштоцу, встречала его на берегу реки Pah—Аракс.